ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ Մերի Մինասյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Խնածախի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Ս. Ալավերդյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն …….....3

Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի դասավանդման ընթացքում……5

Եզրակացություններ ……12

Օգտագործված գրականության ցանկ ……14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Անձն իր զարգացման ընթացքում ներգրավվում է տարբեր փոքր և մեծ խմբերի մեջ: Դրանցից յուրաքանչյուրի կյանքում մասնակցությունն անհատի մեջ ձևավորում է որոշակի բնորոշ գծեր: Նրա անձնային հատկությունները ձևավորվում և զարգանում են կախված որոշակի սոցիալական շերտին, ազգին, էթնիկ խմբին, մասնագիտական կատեգորիային, ընտանիքին և այլ խմբերին պատկանելիությունից: Աշխարհի մասին պատկերացումները, բարոյական հայացքները և համոզմունքները, մտածելակերպը և աշխարհայացքը, հետաքրքրությունները, ձգտումները և արժեքները պայմանավորվում են խմբային գիտակցության առանձնահատկություններով, որում անձը ձևավորվում է և որում ընթանում է նրա առօրյա գործունեությունը:

Արժեհամակարգը կողմնորոշիչ դեր ունի մարդու առարկայական և սոցիալական իրականության մեջ, որը նրա պրակտիկ վերաբերմունքն է շրջապատող առարկաների ու երևույթների հանդեպ: Նորմերը, որոնք ձևավորվել են հասարակության մեջ, հանդիսանում են արժեհամակարգերի բարձրագույն դրսևորումները (այսինքն իշխող տեսակետներն այն մասին, թե որը համարել լավ, ճիշտ կամ ցանկալի): Արժեք և նորմ հասկացությունները տարբերվում են: Արժեքները՝ վերացական, ընդհանուր հասկացություններ են, իսկ նորմերը՝ որոշակի իրավիճակներում մարդկանց վարվելակերպի կանոներն են կամ առաջնորդող սկզբունքները: Արժեհամակարգերը, ձևավորվելով հասարակության մեջ, մեծ դեր են խաղում, քանի որ ազդում են նորմերի վրա:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ցուց տալ, որ արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես մայրենիի առարկան, որի դասավանդման ընթացքում հիմք են դրվում արժեքային համակարգի ձևավորման առաջին տարրերը:

Տարրական դպրոցում մայրենիի դասագրքերում ընթերցանության նյութերն ու բնագրերը ընտրված են այնպիսի թեմատիկ և լեզվառճային բազմազանության սկզբունքով, որոնք ուղղված են սովորողների մեջ ինքնուրույն աշխատելու, հետազոտելու հմտությունների ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը և ոչ միայն մեխանիկական մտապահպանմանն ու վերարտադրմանը: Միաժամանակ, դրանք պարունակում են

աշխարհաճանաչողական գիտելիքներ, որոնք նպաստում են սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը, որն էլ համարվում է դպրոցական կրթության կարևոր և անգնահատելի բաղադրիչը:

Մայրենիի դասավանդման ընթացքը նախատեսում է, որ լեզվական նյութի ուսումնասիրումից բացի, սովորողներին պետք է գիտելիքներ հաղորդվեն հայ ժողովրդի կյանքում մայրենի լեզվի ստեղծման, նրա դերի ու նշանակության վերաբերյալ : Մայրենիի դասավանդման ընթացքում սովորողների մեջ պետք է սերմանել հայրենասիրության, ազգանվիրման, ազգապահպանման, մարդասիրության և այլ բարձր արժեքների հունդեր, այնպես, որ չխաթարվի սովորողի զգայական, իմացական ոլորտը:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Եթէ մանուկը չի հասկնար ձեր դասաւանդութիւնը, յանցանքը ձերն է, որովհետեւ չէք կրցած հասկանալ անոր հոգին. պէտք է վար իջնել մինչեւ անոր հոգեկան աստիճանը, եւ զայն առնելով ձեզի հետ բարձրացնել:

ԿՈՄԻՏԱՍ

<<Արժեհամակարգ>> հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա: Նեղ իմաստով՝ արժեքը մարդու համար իրի, առարկայի, երևույթի դրական նշանակությունն է: Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաներնն են՝ հավատն ու սերը: Հավատը դառնում է կողմնորոշիչ մարդու կյանքի և գործունեության համար: Սիրո մեջ էլ միավորվում են մարդու արժեքային պատկերացումները: Իսկ ինչպես է սահմանվում արժեք հասկացությունը տարբեր բառարաններում: <<Արժեք>> բառն առաջ է եկել ֆրանսերեն <<valoir>> բառից, որը նշանակում է արժանի լլինել : Արժեքն ինչ-որ բանի կարևորությունը, նշանակությունը և օգտակարությունն է: Արժեքային համակարգը կատարում է ամենօրյա կողմնորոշման դեր մարդու առարկայական և սոցիալական գործունեության մեջ:

Օքսֆորդի բառարանում <<արժեք>> թարգմանաբար նշանակում է, որ ինչ- որ բան արժեք ունի, կարևոր է կամ օգտակար: Արժեքները հանդես են գալիս որպես վարքի սկզբունքներ:

Հայերեն բառարաններում <<արժեք>> բառը մեկնաբանվում է մի շարք հոմանիշներով, ինչպիսիք են գին, արժեգին, արժողություն, արժողչեք, նշանակություն, կարևորություն, հարգ, ղադր (բրբ.)

Գրեթե բոլոր մեկնաբանություններում <<արժեք>> հասկացությունը տրվում է նշանակալիի, կարևորի մեկնաբանություն: Արժեքներ կարող են համարվել առողջությունը, սերը, ընտանիքը, երեխաները, ազատությունը, կրոնը, լեզուն և , իհարկե, հայրենիքը: Տարբեր մարդկանց մոտ արժեքների գերակայությունը կարող է նաև տարբեր լինել:

Անձը իր ողջ գիտակցական կյանքում դառնում է որոշակի արժեքների կրողն ու իրականացնողը: Երեխայի բազմակողմանի զարգացման, ճիշտ դաստիարակության, արժեհամակարգի ձևավորման մեջ մեծ դեր ու նշանակություն ունեն ընտանիքն ու դպրոցը: Ընտանիքի և դպրոցի արդյունավետ ու նպատակային աշխատանքի շնորհիվ է ձևավորվում հասարակության համար արժանի անհատ:Կարևոր է այնպես անել, որ սովորողն ինքը գիտակցի այս կամ այն վարքի հնարավոր հետևանքները, լինի հանդուրժող, հարգի այլոց մշակույթը և համոզմունքները:

<< Ես մի տագնապալի եզրահանգման եմ եկել՝ ե՛ս եմ դասարանում որոշիչը: Իմ անձնական վերաբերմունքն է եղանակ ստեղծում: Իմ տրամադրությունն է տրամադրություն ստեղծում: Որպես ուսուցիչ, ես կարող եմ երեխայի կյանքը թշվառ կամ երջանիկ դարձնել: Ես կարող եմ խոշտանգման գործիք կամ ոգեշնչման աղբյուր լինել: Կարող եմ նվաստացնել, ցավ պատճառել, կամ՝ բուժել: Ցանկացած պարագայում ինձանից է կախված՝ ճգնաժամը կխորանա՞, թե՞ կվերանա, երեխան լա՞վը, թե՞ վատը կդառնա >> (Հայմ Գինոտ) :

Երեխան տարրական դպրոցում յուրացնում է այնպիսի կարողություններ ու հմտություններ, որոնք պետք են գալու նրան ողջ կյանքի ընթացքում: Արդի ժամանակաշրջանում դաստիարակչական նպատակներնն ուղղված են որոշակի զգացմունքների և արժեքային համակարգի ձևավորմանը:

Հանրակրթական դպրոցում մայրենիի դասավանդման կարևորագույն խնդիրներից մեկը աշակերտների արժեքային համակարգի ձևավորումն է: Մայրենիի դասերը լայն հնարավորություն են ընձեռում աշակերտների աշխարհայացքի ձևավորմանը: Դա պայմանավորված է ուսումնական առարկայի կառուցվածքով և բովանդակությամբ: 2-4-րդ դասարանների համար ստեղծված մայրենիի դասագրքերը կազմված են թեմատիկ խմբավորման սկզբունքով: Թեմատիկ խմբերում ընդգրկված են ինչպես գեղարվեստական ստեղծագործություններ, այնպես էլ բանահյուսական նմուշներ, ճանաչողական բնույթի տեղեկատվական նյութեր: Արժեհամակարգի ձևավորման խնդիրների լուծման նպատակով

տրված են համապատասխան բնագրեր և առաջադրանքներ: Կարևորելով կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները, մայրենիի դասագրքերի յուրաքանչյուր թեմատիկ խմբում ընդգրկված են այնպիսի նյութեր (պատմվածքներ, բանաստեղծություններ, հեքիաթներ, առակներ, խնդուկներ, առած-ասացվածքներ, հանելուկներ, սուտասելուկներ, շուտասելուկներ), որոնք համապատասխանում են կրտսեր դպրոցականների աշխարհընկալմանը:

Մայրենիի դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորման համար ամենից առաջ անհրաժեշտ է հայեցի, գրագետ, հաճելի, տրամադրող մթնոլորտի ապահովումը: Ամեն մի ժողովուրդ ունի իր ազգային ոգին և հոգեբանությունը, որն էլ դրսևորվում է նրա լեզվի մեջ և լեզվի միջոցով էլ փոխանցվում սերնդեսերունդ: Իսկ ազգային ոգին և հոգեբանությունն արտացոլվում է հատկապես ժողովրդի բանահյուսության, նրա ամեն մի նշխարի, մշակույթի էջերում: Ուրեմն պիտի այդ էջերով հունցվի, դաստիարակվի երեխայի ներաշխարհը, հոգին ու միտքը, ճաշակն ու վարքը: Առաջին իսկ օրը, երբ առաջին դասարան հաճախող թոթովախոս փոքրիկը ոտք է դնում դպրոցի շեմին, նրա մեջ աստիճանաբար սկսվում են ձևավորվել այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հայրենասիրությունը, ընկերասիրությունը, հանդուրժողականությունն ու փոխօգնությունը:

<<Այբբենարանի>> առաջին իսկ էջերից սկսվում է ծանոթացումը հայրենիքին, մեծն ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցին, ազգային հերոսներին, ավանդույթներին, բարուն և գեղեցիկին, արդարությանն ու ազնվությանը: Մայրենիի դասավանդման ընթացքում հաճախ ենք հանդիպում ժողովրդական բառուբանին՝ խնդուկներ, դարձվածքներ, ասույթներ, մաղթանքներ, օրհնանքներ և օրոր, խաղիկ-տաղիկներ, թևավոր խոսքեր: Մայրենիի դասընթացում ժողովրդական բառ ու բանի ուսուցումը լավագույն միջոցներից է սովորողներին ծանոթացնել իրենց արմատներին, հայկական ավանդույթներին, ազգային սովորություններին ու հարստություններին, հայրենի բնությանը և մարդկանց:

1-4-րդ դասարաններում մայրենիի դասավանդման ընթացում անընդհատ և անընդմեջ է իրականացվում արժեհամակարգի ձևավորումը: Հաշվի առնելով մայրենիի ուսումնասիրման և ուսուցման խնդիրներն ու նպատակները, ուսուցիչը յուրաքանչյուր դասի ժամանակ իրագործում է որոշակի լուծումներ, որոնք նպաստում են սովորողների դաստիարակությանն ու արժեքների ձևավորմանը: Այս գործընթացում չպետք է անտեսել

միջառարկայական կապերի դերը: Մայրենիի դասավանդման ընթացում յուրացրած որոշակի հասկացություններ, բառեր, որոնք ծառայում են արժեհամակարգի ձևավորմանը, գործածվում են նաև այլ առարկաների դասավանդման ընթացքում, ինչու չէ նաև առօրյա խոսքում:

<<Ինչու՞ ես ատեմ երեխային նրա այսօրվա վատի համար, ես նրան կսիրեմ այն լավի համար, ինչը նրա մեջ կդաստիարակեմ վաղը>>(Վ. Ա. Սուխոմլինսկի) : Եվ նա երեխաների մեջ դաստիարակում է ջերմ հայրենասիրություն, մարդասիրություն,աշխատասիրություն, համեստություն, պարտքի և պատասխանատվության զգացում և բարոյական այլ վսեմ հատկություններ: Եվ նա դաստիարակում էր ոչ միայն դասին, այլ բնության գրկում, աշակերտների հետ կազմակերպվող արտադասարանական և արտադպրոցական հետաքրքիր աշխատանքների ընթացքում: Եվ այդպես պետք է կազմակերպել մայրենիի դասապրոցեսը:

Մայրենիի ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի (արտադասարանական միջոցառումներ, ուսումնադաստիարակչական-ճանաչողական էքսկուրսիաներ, թատերական ներկայացումներ, դասղեկական ժամ, անհատական կամ խմբային աշխատանքներ, խաղեր) ընտրության միջոցով առավել արդյունավետ է դառնում սովորողների մեջ արժեհամակարգի դաստիարակչական խնդիրների լուծումը:

Այդպիսի աշխատանքներում աշակերտների մեջ ձևավորվում է ազատ ինքնաարտահայտվելու, ինքնակառավարվելու, դժվարությունները հաղթահարելու , փոխզիջելու և աջակցելու ընդունակությունները: Մայրենիի դասավանդման ընթացքում ուսուցման տարբեր ձևեր ճիշտ և հմուտ օգտագործելով, ուսուցիչը հասնում է նրան , որ սովորողի մեջ կաթիլ առ կաթիլ ձևավորվում է ընկերոջը օգնելու, աջակցելու, հանդուրժող լինելու, լսելու հմտություններն ու կարողությունները: Մայրենիի դասերը կազմակերպելով դասասենյակից դուրս (ուսումնասիրվող թեմայի նպատակներից ելնելով) , ուսուցիչը կարող է երեխաների մեջ հետաքրքրասիրություն առաջացնել տվյալ թեմայի նկատմամբ: 1-4-րդ դասարաններում մայրենիի դասագրքերում դասանյութերը ներկայացված են որոշակի քանակով թեմատիկ խմբերով.

1-ին դասարան՝

- Գարունը դպրոցում
- Իմ ընտանիքը

- Մեր հայրենիքը Հայաստանն է
- Մեր բարեկամ կենդանիները
- Հեքիաթների աշխարհ

2-րդ դասարան՝

- Դպրոցը և գրքերի կախարդական աշխարհը
- Ոսկեծամիկ աշուն
- Ժողովուրդն իմաստուն է
- Տեսնես՝ լա՞վ է, թե՞ վատ
- Մեր խաղաղ տունն ու ընտանիքը
- Բարև՛, ի՛նչ սառն են ձեռքերդ, ձմե՛ռ
- Երկնքից երեք խնձոր ընկավ
- Գարուն է եկել
- Մեր բարեկամ կենդանիները
- Հայաստանը մեր հայրենիքն է
- Աշխարհն էլ մի հեքիաթ է

3-րդ դասարան՝

- Փոքրիկ պատուհան դեպի մեծ աշխարհ
- Բա՛ց արա թերթերդ, տեսնենք հրաշքներդ
- Ժողովուրդն իմաստուն է
- Հայրենի՛ք, ես մի զարկն եմ քո բազկի
- Լինում է, չի լինում՝ մի հեքիաթ է լինում
- Ամենասովորական հրաշքները

4-րդ դասարան՝

- Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները
- Ա՛յ քեզ բան. ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ հա՛յ-ռե՛-նի՛ք է
- Ես այսպե՛ս ասեմ, դու այնպե՛ս հասկացիր
- Յոթ սարից, յոթ ձորից այն կողմ
- Այս զարմանահրաշ մոլորակը

Ինչպես նկատեցինք, 1-4-րդ դասարաններում մայրենիի դասագրքերում շեշտը դրված է հայրենիքին նվիրված դասանյութերին, որոնց ճիշտ ուսուցումը, ճիշտ նպատակադրումը դառնում է ուսուցչի գերագույն խնդիրը: Այսօր քան երբևէ, մեր երկիրը գտնվելով օրհասական վիճակում, ուսուցչից պահանջվում է մանկավարժական հմուտ վերաբերմունք՝ ճիշտ կրթելու, դաստիարակելու, ազգային վեհ արժեքներ ձևավորելու համար:

<<Երեխան, ուսումնասիրելով մայրենի լեզուն, միայն պատմական հնչյուններ չէ, որ սովորում է, այլև հոգևոր կյանք և ուժ է ըմպում մայրենի լեզվի մայրական կրծքից>> ,- գրել է Կ. Դ. Ուշինսկին: Ինչպես արդեն վերը նշվել էր, երեխան ոտք դնելով դպրոցի շեմին, նրա մոտ արդեն ձևավորվում են հայրենասիրության և հայրենապաշտության որոշակի ծիլեր, որոնք հետագայում մայրենիի դասավանդման ընթացքում ծլարձակում ու տալիս են իրենց սերմերը: Հմուտ ուսուցիչը մանկավարժական ճիշտ հնարների միջոցով մայրենիի բոլոր դասանյութերի ուսուցման ընթացքում, հասնում է նրան, որ աշակերտների մոտ ձևավորվի ազգային արժանապատվության ոգին: Հայրենիքին նվիրված ցանկացած նյութի ուսուցումը, սկսելով մեր նախնիների հերոսական սխրանքից, պատմական հզոր դրվագներից, պատմամշակութային կոթողներից, անվանի հայ մեծերից, պետք է հասցնել մինչև մերօրյա հերոսական իրադարձություններին:

Մայրենիի ուսուցման ընթացքում, ուսուցիչը պետք է միշտ վառ պահի երեխաների սիրո կրակը հայրենիքի, նրա խորհրդանիշների, ազգային մշակույթի, հայրենի բնաշխարհի նկատմամբ: Ուսուցիչն ինքը պետք է կենդանի օրինակ լինի իր առջև կանգնած յուրաքանչյուր փոքրիկի աչքերում: Փոքր չափաբաժիններով սովորողներին ներարկելով անսահման սեր հայրենի հողի, մայրենի լեզվի, ընտանիքի նկատմամբ, սովորողի մեջ ձևավորվում են մարդասիրության դրսևորումներ, որոնք լավագույնս ի հայտ են գալիս մայրենիի դասավանդման ժամանակ կազմակերպվող զրույց-քննարկումների ընթացքում: Սովորողներին ճիշտ մատուցելով մեր հայրենիքի պատմությունը, հայ քաջորդիների սխրանքն ու հայի արժանապատվությունը, անպայման, կտեսնենք այն աչքերի փայլը, որ ունեն միայն հայ մանուկները:

Սովորողների մեջ հայրենասիրական արժեքների ձևավորման համար կարևոր դեր են խաղում դասանյութերը նվիրված Հայկ Նահապետի և Սասունցի Դավթի հերոսական պայքարին, Անդրանիկ Օզանյանի հայրենանվեր գործունեությանը, Հովհաննես Թումանյանի և

Մարտիրոս Սարյանի ստեղծած գլուխգործոցներին, Վիկտոր Համբարձումյանի աստղագիտական հայտնագործություններին: Նրանց կատարած սխրանքի միջոցով է սովորողի մոտ արժևորվում հայրենասիրությունը, ազնվությունն ու արդարությունը, մարդասիրությունն ու աշխատասիրությունը: Սովորողների մեջ ձևավորվում է այն համոզմունքը, որ լինել հայրենասեր նշանակում է սովորել և աշխատել ի շահ հայրենիքի բարգավաճման, պահպանել հայի ու հայրենիքի արժանապատվությունը, և ոչ մի դեպքում չխաղալ նրա պատվի հետ: Սովորողներին անձնական օրինակով ցույց տալ, որ հայրենիքը, հայ ժողովուրդը բոլոր սրբությունների սուրբ սրբոցն է, հարկ եղած դեպքում պաշտպանել հայրենիքը մինչև արյան վերջին կաթիլը….

1-4-րդ դասարանների <<Մայրենի>> դասագրքերում ներկայացված են թեմատիկ խմբեր ընտանիքի, կենդանիների մասին, դասանյութեր կան հեքիաթների, առած-ասացվածքների , դարձվածքների տեսքով: Դրանց միջոցով երեխաները սովորում են տարբերել բարին չարից, ազնվությունն ու ճշմարտությունը ստից ու կեղծիքից, սովորում են արժևորել ընտանիքը և իր դերն ու պարտականությունները ընտանիքում, սովորում են պահպանել ու պաշտպանել բնությունն ու մարդու փոքրիկ բարեկամներին: Յուրաքանչյուր բնագիր նկարազարդված է գեղեցիկ ու վառ գույներով, հետաքրքրքշարժ առաջադրանքներով, որոնք նպատակաուղղված են երեխայի ստեղծագործական երևակայությունը, մտածողությունը,գեղեցիկը զգալու և գնահատելու կարողությունների զարգացմանը: Ասել է, թե մայրենիի դասավանդման ողջ ընթացքը ուղղված է սովորողների մեջ բարձր արժեքների (արժեհամակարգի) ձևավորմանը , դաստիարակությանն ու կրթությանը: Այս ամենի կրողն ու իրականացնողը, անշուշտ, մնում են հայ դպրոցն ու հայ ուսուցիչը….

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ոչ միայն մայրենիի դասավանդման խնդիր է, այլ ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Մենք՝ մանկավարժներս, պետք է անձնական օրինակով, ինքնակրթմամբ, ստացած գիտելիքի ողջ պաշարով ներդնենք առավելագույնը, հանդես բերենք ստեղծագործական մոտեցում և հետևողականություն՝ ի շահ մեր երեխաների բարօրությանը, ի շահ երկրի և վաղվա հայրենիքի հարատևմանը:

Ուսուցչի ուսերին է դրված մատաղ սերնդի կրթության և դաստիարակության ծանր բեռը: Սովորողների արժեհամահարգի ձևավորումը պետք է իրականացնել ոչ միայն մայրենիի դասվանդման, այլ ընդհանրապես առարկայի շրջանակներից դուրս: Եվ այս աշխատանքը պետք է կատարել ամենայն պատասխանատվությամբ:

Մայրենիի դասավանդման ընթացքում ուսումնասիրված ցանկացած թեմա, յուրովի է անդրադառնում սովորողների բարոյահոգեբանական բնութագրի վրա: Ամեն դասանյութ իր ուրույն ազդեցությունն է թողնում սովորողների արժեհամակարգի, անձնային որակների, բնավորության նուրբ գծերի ձևավորման գործընթացում:

Չեմ սխալվի, եթե նշեմ, որ մայրենիի դասավանդման ընթացքում ամեն ուսուցիչ շեշտը դրել է ոչ միայն դասի կրթական, այլև դաստիարակչական նպատակներն ու խնդիրները իրականացնելու վրա, ապահովելով նաև միջառարկայական կապերը, համապատասխան միջավայրի ստեղծումը, դրանով իսկ նպաստելով սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանն ու պահպանմանը: Այսօր մեծանում է այնպիսի մի սերունդ, ով հստակ գիտակցում է իր ասելիքն ու անելիքը, նա է այսօրվա պահանջատերը և վաղվա սեփականատերը: Եկե՛ք օգնենք նրան, ճիշտ շարունակի բռնած ուղին:

Ակամայից մտաբերեցի վրաց մանկավարժ-հոգեբան Շալվա Ամոնաշվիլու խոսքերը.

-Եթե ուզում ես մեկի համար ծառ տնկել՝ տնկի՛ր պտղատու ծառ:

-Եթե ուզում ես մեկին ձի նվիրել՝ նվիրի՛ր լավագույն նժույգը:

-Իսկ, եթե քեզ վստահել են դաստիարակության գործ, ապա հավատա՛ երեխայի թռիչքին:

Արդ եկե՛ք հավատանք սովորողների թռիչքին և նրանց մեջ ձևավորելով վսեմ արժեքներ, ինչպիսիք են հայրենասիրությունը, ազգասիրությունը, նվիրվածությունը, ազնվությունը, լավը վատից տարբերելու կարողությունը, տանք նրանց թևեր, որ թռչեն, իսկ մենք՝ ուսուցիչներս թռչենք նրանց հետևից և վայելենք նրանց ճախրանքը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Կ. Թորոսյան,Վ.Սարգսյան,Հ.Խաչատրյան,Մայրենի 2-4 ուսուցչի ձեռնարկ, Երևան , Մանմար-2013
- Նախաշավիղ, ՀՀ ԿԳՆ, ԿԳՆ ԿԱԻ, 7/2010
- Նախաշավիղ, ՀՀ ԿԳՆ, ԿԳՆ ԿԱԻ, 8/2010
- Կ. Սահակյան, Արտասահմանյան մանկավարժության պատմության ուսումնասիրման մեթոդական ցուցումներ և առաջադրանքներ, Զանգակ-97, Երևան-2003
- ԵՊՀ, Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան <<Ասողիկ>> 2016
- Հանրակրթական հիմնականդպրոցի <<Հ. լեզու, գրականություն>> ուսումնական բնագավառի առարկայական ծրագրեր, հավելված N2, ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2011թ. 29 օգոստոսի-N1000-Ա/Ք հրամանի
- Լ. Ալեքսանյան, Ն. Թորոսյան, Կյանքի հմտությունների ինտեգրված ձեռնարկ միջին դպրոցի ուսուցիչների համար (քաղաքացիական դաստիարակություն), Երևան 2008
- https://vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna.pdf
- https://fliphtml5.com/rpoh/wxel/basic?fbclid=IwAR2ZOPI09WYFszEWssXQdb_0xxuDy3iynJ0efDPv-f-CSaQb3C1ZxbUReY4
- https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%AA%D5%A5%D6%84%D5%B6%D5%A5%D6%80?fbclid=IwAR2UvIwsg-MAlNWXp3C0qymuaW8dHJBEOR3ybjLOBwwywgiGVZRFH7b-v5Q
- https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%AA%D5%A5%D6%84
- https://bararanonline.com/%D5%A1%D6%80%D5%AA%D5%A5%D6%84?fbclid=IwAR1iTekdeoqxYwkWLGTtGl-28B9kByUaazF4uXnipvrO8o00CSOslw-5fFE